

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

2016-2020

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՂԵԼԸ

ԲՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հյուսիսային համալսարանը հիմնադրվել է 1996թ-ին, իր առջև նպատակ դնելով ապահովել գիտականության, օրինապաշտության, մարդասիրության, հայրենասիրության և արդարացիության սկզբունքները: 2001թ. համալսարանը առաջիններից էր, որ ստացել է պետական հավատարմագրում:

Կազմակերպության կառավարման համակարգում գործում են ինչպես, վարչական ենթահամակարգի կառավարող սուբյեկտներ (ռեկտոր, պրոռեկտոր, ուսվարչության պետ, դեկաններ, ամբիոնների վարիչներ), այնպես էլ կառավարման կոլեգիալ մարմիններ (գիտխորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ): Ընդ որում առաջինները հաշվետու են կոլեգիալ մարմինների առջև: Կարգերի համաձայն ռեկտորին կից որպես խորհրդակցական մարմին գործում է ռեկտորատը, գիտական խորհուրդին են վերապահված համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

Համալսարանի կառավարման բարձրագույն մարմիններն են՝

- 1) համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովը,
- 2) համալսարանի գիտական խորհուրդը,
- 3) համալսարանի ռեկտորը (գործադիր մարմնի ղեկավարը):


Մասնակիցների ընդհանուր ժողովը համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կարգով կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք ունի: Մասնակիցների ընդհանուր ժողովը ընտրում կամ նշանակում է ռեկտորին, կանոնակարգում է բուհի իրավանորմատիվային դաշտը:

Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը լուծում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցեր, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային

ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին, շնորհում է գիտական կոչումներ: Համալսարանի գիտխորհրդի առնվազն 25 տոկոսը ուսանողներ են: Համալսարանի ռեկտորը ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի գիտխորհրդի նախագահ:

Համալսարանի գործադիր իշխանությունը իրականացնում է համալսարանի ռեկտորը: Համալսարանի ռեկտորը իրականացնում է համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ կնքում պայմանագրեր, համաձայնագրեր, համալսարանի այլ աշխատակիցների հետ կնքում աշխատանքային պայմանագրեր, հաստատում աշխատանքային հաստիքներ, աշխատանքի է ընդունում և օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատում համալսարանի աշխատողներին, կազմավորում է համալսարանի գիտական խորհուրդը, և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում է աշխատողների լիազորությունները, պաշտոնական պարտականությունները: Համալսարանի ռեկտորը տարեկան հաշվետվություններ է ներկայացնում համալսարանի մասնակիցների ժողովին:

ՀՅՈՒՄԻՍԱՑԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀՅՈՒՄԻՍԱՑԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Համալսարանում գործում է եռաստիճան կրթական համակարգ՝ շնորհելով բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի կրթական աստիճաններ: Համալսարանը առաջարկում է բակալավրի տասնչորս և մագիստրոսի ինը կրթական ծրագրեր: Ասպիրանտուրայի կրթական ծրագիրը իրականացվում է երեք ուղղություններով՝ «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում», «Հայ դասական գրականություն» և «Դատական իրավունք»:

2007-2009թթ. Հյուսիսային համալսարանում ներդրվել է ուսուցման ECTS համակարգը: Ուսման որակի բարձրացումը խրախուսելու նպատակով համալսարանում ստեղծվել է ռոտացիայի սկզբունքով գործող անվճար և զեղչերով ուսումնառության, ինչպես նաև անվանական կրթաթոշակների շնորհման համակարգ:

Հյուսիսային համայնքային ղեկավարության նախագահի կողմից հրատարակված է հետևյալ մասնագիտությունների կրթական ծրագրերով:

<i>N</i>	<i>Մասնագիտություն</i>	<i>Ուսուցման ձևը</i>	<i>Որակավորում</i>
1	<u>Հնդհանուր մանկավարժություն՝</u> 011301.01.6-տարրական մանկավարժություն և մեթոդիկա	առկա, հեռակա	Մանկավարժության բակալավր
	011301.01.7-տարրական մանկավարժություն և մեթոդիկա		Մանկավարժության մագիստրոս
2	<u>Նախադպրոցական մանկավարժություն՝</u> 011201.01.6-նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	առկա, հեռակա	Մանկավարժության բակալավր
	011201.01.7-նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա		Մանկավարժության մագիստրոս
3	<u>Մասնագիտական մանկավարժություն՝</u> 011401.19.6-հայոց լեզու և գրականություն 011401.23.6-ֆրանսերեն լեզու և գրականություն	առկա, հեռակա	Մանկավարժության բակալավր
	<u>Մասնագիտական մանկավարժություն՝</u> 011401.21.6-անգլերեն լեզու և գրականություն		Մանկավարժության բակալավր
	011401.21.7-անգլերեն լեզու և գրականություն		Մանկավարժության մագիստրոս
4	<u>Օտար լեզու և գրականություն՝</u> 023102.02.6-անգլերեն լեզու և գրականություն	առկա, հեռակա	Բանասիրության բակալավր
	023102.02.7-անգլերեն լեզու և գրականություն		Բանասիրության մագիստրոս
	023102.04.6-ֆրանսերեն լեզու և գրականություն	առկա	Բանասիրության բակալավր
5	<u>Իրավագիտություն՝</u> 042101.01.6-իրավագիտություն	առկա, հեռակա	Իրավագիտության բակալավր
	042101.03.7-քաղաքացիական իրավունք և դատավարություն	առկա, հեռակա	Իրավագիտության մագիստրոս
	042101.04.7-քրեական իրավունք և դատավարություն 042101.07.7-միջազգային և եվրոպական իրավունք		

6	<u>Լրագրություն</u> 032101.01.6-լրագրություն	առկա, հեռակա	Լրագրության բակալավր
	032101.01.7-լրագրություն		Լրագրության մագիստրոս
7	<u>Օրագրային ճարտարագիտություն</u> 061102.01.6-ծրագրային ճարտարագիտություն	առկա, հեռակա	Ինֆորմատիկայի բակալավր
	<u>Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)</u> 061101.03.7-ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա		Ինֆորմատիկայի մագիստրոս
8	<u>Տնտեսագիտություն</u> 031101.01.6-տնտեսագիտություն	առկա, հեռակա	Տնտեսագիտության բակալավր
	031101.01.7-տնտեսագիտություն		Տնտեսագիտության մագիստրոս
9	<u>Հաշվապահական հաշվառում և հարկում</u> 041101.01.6-հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	առկա, հեռակա	Տնտեսագիտության բակալավր
	041101.02.7-հաշվապահական հաշվառում և աուդիտ		Տնտեսագիտության մագիստրոս
10	<u>Կառավարում</u> 041301.01.6-կառավարում (ըստ ոլորտի)	առկա, հեռակա	Կառավարման բակալավր
	041301.01.7-կառավարում		Կառավարման մագիստրոս
11	<u>Հոգեբանություն</u> 031301.01.6-հոգեբանություն	առկա	Հոգեբանության բակալավր
12	Հայ դասական գրականություն		Բանասիրական գիտությունների թեկնածու
13	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում		Տնտեսագիտության թեկնածու
14	Դատական իրավունք		Իրավաբանական գիտությունների թեկնածու

Ուսումնական գործընթացը իրականացվում է բարձրագույն դպրոցի լավագույն ավանդույթների, ՀՀ օրենսդրության և Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան: Ուսման ընթացքում սովորողները ստանում են խոր գիտելիքներ և ունակություններ, զարգացնում վերլուծական, հաղորդակցական և գործնական որակները:

Ուսումնական գործընթացը վերահսկվում է ուսումնական վարչության, մասնագիտական ամբիոնների, դեպարտամենտների ղեկանների, որակի ապահովման վարչության և որակի ապահովման հանձնաժողովների կողմից:

Բուհի դասախոսները մշտապես համալրում են իրենց տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, մշակում և կատարելագործում են առարկայական ծրագրերը, մեթոդական ձեռնարկները: Բուհում կազմակերպվում են դասախոսների վերապատրաստման դասընթացներ հետևյալ ուղղություններով՝ համակարգչային գրագիտություն, օտար լեզվի ուսուցում, կրթական բարեփոխումներ: Պարբերաբար անցկացվում է պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորում:

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2020ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հյուսիսային համալսարանի 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի իրագործումը հնարավորություն տվեց հստակեցնել բուհի առաքելությունն ու նպատակները, բուհի իրական ներուժի վերհանմամբ հզորացնել բուհի մարդկային ու մասնագիտական ռեսուրսները, բարելավել բուհի նյութատեխնիկական հագեցվածությունը, ակտիվացնել բուհի արտաքին կապերը, բուհի առաքելությանը համապատասխան ձևավորել գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ հարթակ, զարգացնել ուսանողակենտրոն կրթական քաղաքականության հիմնարար սկզբունքները, ապահովելով բուհի շարունակական զարգացման համար ամուր հենարան: Մակայն դրա հետ մեկտեղ ակնհայտ դարձան ռազմավարական ծրագրի որոշ խոցելի կողմեր, որոնց ժամանակին վերհանումը հնարավորություն տվեց խնդիրների կարգավորման ուղղությամբ ռազմավարական ծրագրում համապատասխան ճշգրտումներ կատարելով նախատեսել հավելյալ միջոցառումներ, որոնց շարունակականության անհրաժեշտությամբ պայմանավորված վերջիններս ներառվեցին նաև 2016-2020թթ. ռազմավարական ծրագրում: Մասնավորապես, նոր մարտահրավերների հետևանքով, որոնց պայմանավորող առավել ազդեցիկ գործոններից են հանրապետությունում բուհերի կազմակերպաիրավական ձևից անկախ՝ բուհական ընդունելության միասնական կենտրոնացված համակարգի ներդրումը, բուհերի միջև մրցակցության ուժեղացումը, արտաքին պայմանների արագ

վերափոխումները, հանրապետությունում ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համակարգի ներդրումը, կրթական ծառայությունների շուկայի զարգացումները, հանրապետության ժողովրդագրական պատկերի փոփոխությունները, անհրաժեշտություն առաջացրեցին բովանդակային և կառուցվածքային առումով հստակեցնել առաջիկա տարիների համար զարգացման տեսլականը, հիմնավոր ուսումնասիրությունների միջոցով վեր հանելով առավել հրատապ գործընթացները, հստակեցնել ծրագրային միջոցառումների վերջնարդյունքները, նախատեսելով դրանց գնահատման մեխանիզմներ, այդ թվում, ըստ հստակ ցուցիչների և արդյունավետության չափանիշերի: Միաժամանակ, ռազմավարական բնույթի ծրագրային միջոցառումներին զուգահեռ առանձնացնել որոշ գերակայություններ և առաջնահերթություններ, որոնց իրականացման ուղղությամբ համալսարանի նախատեսվող աշխատանքները կկրեն առաջնային բնույթ:

Հյուսիսային համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը պետք է հիմք հանդիսանա ակադեմիական անկախության հարթությունում բուհի շարունակական զարգացման համար:

Ծրագրի նպատակը

Հյուսիսային համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նպատակն է 2016-2020թթ. ժամանակահատվածի համար ձևավորել այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը կստեղծի ժամանակակից գիտակրթական գործունեությամբ համալսարանի կայուն զարգացման և կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ պայմաններ, համալսարանում կրթական գործընթացի կազմակերպման համար առանցքային դարձնելով կրթության որակի ապահովման միջազգայնորեն ընդունված համընդհանուր չափորոշիչները և չափանիշերը: Համալսարանի ընթացիկ գործունեության վերլուծությունից, համալսարանի 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի ընթացիկ կատարողականների գնահատականից, այդ թվում, նշված ժամանակահատվածում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում Հյուսիսային համալսարանի ընգրկվելու կապակցությամբ համալսարանի՝ ներքին և միջազգային փորձի համադրմամբ իրականացված արտաքին փորձաքննության արդյունքներից հետևում է, որ նշված նպատակն ապահովելու համար անհրաժեշտություն է դառնում, միաժամանակ, հիմք ընդունելով համալսարանի 2011-2015թթ. Ռազմավարական ծրագրի համապատասխան միջոցառումների վերջնարդյունքները և համալսարանի ընթացիկ վիճակի գնահատականը, բուհի առաքելությանը համապատասխան շարունակական դարձնել համալսարանում

ներդրված բարեփոխումների ռազմավարությունը, այդ թվում, կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ներուժի արդյունավետ կիրառմամբ, կրթական չափորոշիչներին համալսարանի գործունեության համապատասխանության թիրախավորմամբ ձեռնարկել համընդհանուր համալիր միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

- [Օրագրային ժամանակահատվածի համար համալսարանի առաքելություն:](#)
- [Արդյունավետ կառավարում և վարչարարություն:](#)
- [Որակյալ կրթական համակարգ:](#)
- [Արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում:](#)
- [Ուսանողական համակազմի ընդլայնում:](#)
- [Մարդկային ռեսուրսների կառավարում:](#)
- [Ենթակառուցվածք և ռեսուրսներ:](#)
- [Հետազոտություն և գիտահետազոտական պոտենցիալ:](#)
- [Հասարակական պատասխանատվություն և հետադարձ կապ:](#)

Հյուսիսային համալսարանն իր առաջնահերթությունների, պարտավորությունների ու նպատակների իրականացման ապահովման համար՝ օգտագործելով համապատասխան արդյունավետության ցուցանիշները, հսկիչ ցուցանիշները և գործիքակազմը, հիմնվում է բուհի ռազմավարական ծրագրի վրա, երաշխավորելով, որ այն կշարունակի վերհանել կրթական կարիքները, որը հնարավորություն կտա արագ արձագանքել արտաքին միջավայրի ազդակներին և իրականացնել անհրաժեշտ թարմացումներ:

Հյուսիսային համալսարանի առաքելությունը

Հյուսիսային համալսարանն իր ստեղծման և ինքնահաստատման 20 տարիների ընթացքում հավատարիմ է մնացել իր առաքելությանը: Մասնավորապես, Հյուսիսային համալսարանն իր առաքելությունն է համարում՝ կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված տնտեսագիտության, ձեռնարկատիրության կառավարման, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության և մանկավարժության ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը:

Նշված առաքելությանը հավատարիմ՝ Հյուսիսային համալսարանը առաջիկա 5 տարիներին ևս իր նպատակն ու գործունեության առաջնային խնդիրներն է համարում:

- Հայ հասարակության ներքին պահանջների արժևորմամբ ու շուկայի կարիքների հաշվառմամբ և բարձրագույն մասնագիտական կրթության միջազգային փորձի ու սեփական նախաձեռնությունների զուգակցմամբ բարձրորակ կադրեր պատրաստել առավել հեռանկարային մասնագիտությունների գծով:
- Կրթադաստիարակչական գործունեության միջոցով ապահովել ուսանողների հայրենասիրական ոգու դաստիարակումն ու ամրապնդումը, նպաստել մարդասիրության, ժողովրդավարության գաղափարների, հասարակության բարոյական, մշակութային և գիտական արժեքների արմատավորմանն ու տարածմանը:
- Ուշադրության կենտրոնում պահել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական ներուժի զարգացումը, համալսարանի դասախոսների կատարելագործման խնդիրները ոչ միայն մասնագիտական, այլև օտար լեզուների, համակարգչային հմտությունների և նորարարական մեթոդների ներդրման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապերի ընդլայնման ու սերտացման և բուհի միջազգայնացման ուղղությամբ՝ արտաքին հարաբերությունների ոլորտում առաջնային համարելով հայ-ռուսական կրթամշակութային կապերը:
- Նպաստել ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի իրականացմանը տարածաշրջանների համաչափ զարգացման ուղղությամբ, հզորացնել հանրապետության փոքր քաղաքներում գործող Հյուսիսային համալսարանի մասնաճյուղերի ուսումնամեթոդական բազան, կատարելագործել գիտամանկավարժական պոտենցիալը:
- Քայլեր ձեռնարկել, որպեսզի որևէ ուսանողի ցանկությունը՝ սովորել Հյուսիսային համալսարանում չխոչընդոտվի ֆինանսական կամ այլ արգելքով, և կրթության ընթացքում որևէ ուսանողի առաջընթացն ու ձեռքբերումները չընդատվեն ֆինանսական դժվարությունների պատճառով:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարման և վարչարարության համակարգ

- բարձրացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ խթանելով համալսարանի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունն ու հաշվետվողականությունը,
- հստակեցնել համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները,
- համալսարանի կառավարման մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովման նպատակով ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

Այդ թվում, ձեռնարկված քայլերն ուղղված են լինելու համալսարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներբուհական ինտեգրացման ակտիվացմանը, ստորաբաժանումների միջև տեղեկատվության, ինչպես նաև որոշակի տեխնոլոգիաների փոխանակման հնարավորությունների ընդլայնմանը, թիմային գործելավոճի մշակույթի ներդրմանն ու զարգացմանը:

Ֆինանսատնտեսական կառավարման համակարգ

Ֆինանսատնտեսական կառավարման համակարգի բարեփոխումները նույնպես ընդգրկվելու են առաջնայնությունների շարքում, որի արդյունքում համալսարանում շուրջ 20 տարի կիրառված ֆինանսատնտեսական կառավարման համակարգը կվերակառուցվի ծրագրային բյուջետավորման համակարգի:

Ծրագրային ժամանակահատվածի համար համալսարանի ֆինանսական մուտքերի ապահովման նախատեսվող ծրագրային միջոցառումները կարելի է ամփոփել հետևյալ ուղղություններով՝

- ձևավորել ուսման վարձերի առավել ճկուն համակարգ,
- նոր և պահանջված մասնագիտություններով, այդ թվում, ըստ տարբեր կրթական ծրագրերի՝ համալսարանի գործունեության ընդլայնում,
- համալսարանի ուսումնական տարածքները համալսարանի կողմից չօգտագործվող ժամանակահատվածում այլ անձանց վարձակալության տրամադրելու հնարավորությունների ուսումնասիրություն,
- դրամաշնորհային ծրագրերի և այլ անհատույց միջոցների ներգրավում:

ՈՐԱԿՑԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Որակի ներքին ապահովման համակարգ

Որակի ապահովման գործընթացում որպես հիմնական սկզբունքներ նախատեսվելու են՝

- համակարգված մոտեցումը որակի ապահովման գործընթացների նկատմամբ,
- որակի ապահովման գործընթացների շուրջ ժողովրդավարական և բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների թափանցիկությունը,
- բոլոր մակարդակներում հաշվետվողականությունը,
- որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների անընդհատությունը,
- բուհի բոլոր գործընթացներում որակի ապահովման շրջափուլի ինտեգրումը,
- որակի ապահովման ծրագրային միջոցառումների որոշակիությունը, չափելիությունը, հասանելիությունը, իրագործելիությունը, ժամանակի մեջ հստակ կանխորոշվածությունը:

Այսպիսով, որակի ապահովման ուղղությամբ համալսարանում որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին համապատասխան՝ համալսարանի ռազմավարական ծրագրային բոլոր միջոցառումները որակի ապահովման համակարգի բաղադրիչներ են, որոնք նպատակաուղղված են եղել և առաջիկայում նույնպես նպատակադրվելու են՝ ապահովելու համալսարանի առաքելությանը համապատասխան գերակայությունների իրագործումը, որի արդյունքում ակնկալվում է ծրագրային ժամանակահատվածում ապահովել համալսարանի կրթական գործունեության շարունակական համապատասխանեցում ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար սահմանված չափանիշերին և չափորոշիչներին, այդ թվում, պարբերաբար ապահովելով համալսարանի ընդգրկումը ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներին:

Համալսարանի մասնագիտական կրթական ծրագրեր

2016-2020թթ. ժամանակահատվածի համապատասխանող նոր սերնդի ՄԿԾ-ները պետք է միտված լինեն շրջանավարտների այն կոմպետենցիաների ձևավորմանը, որոնք պահանջված են հասարակության և աշխատաշուկայի կողմից:

Ծրագրային ժամանակահատվածում բուհի հզորացման և կառավարման արդյունավետության համար անհրաժեշտ է՝

- ՄՈՒՀ-ի առաքելությանը, ՈԱՇ-ին, շուկայի պահանջներին համապատասխան, մասնագիտական կրթական ծրագրերում մատնանշել ակնկալվող ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով, թե ՄԿԾ-ի ավարտին ի՞նչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը,
- վերանայել ՄԿԾ-ների շրջանակներում դասավանդվող առարկաների ծրագրերը և դրանց կրթական ելքային արդյունքները՝ մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան,

- դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին,
- ՄԿԾ-ների և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին համապատասխան ուսանողների գնահատման համակարգի վերանայում,
- նորացնել ուսումնական պլանները՝ ուժեղացնելով դրանցում նախատեսվող ինքնուրույն և խմբային աշխատանքների, գործնական և հետազոտական բաղադրիչները,
- պարբերաբար հավաքագրել և վերլուծել ՄԿԾ-ով բավարարվածության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարծիքները,
- որակի ամբողջական կառավարման համակարգի ստեղծում:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Բուհի ռազմավարական ծրագրով նախատեսված է արտաքին կապերի ձևավորում և զարգացում, այդ թվում՝ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ ակտիվ համագործակցության ծրագրերի իրականացում, բուհի աստիճանական միջազգայնացում:

2016-2020թթ. Հյուսիսային համալսարանի միջազգայնացմանը նպաստելու համար անհրաժեշտ է՝

- ստեղծել միջազգայնացմանն ուղղված նորմատիվային բազա,
- ակադեմիական մոբիլության միջազգային ծրագրերում մասնակցելու համար առավել լայնորեն ընգրկել ուսանողներին և դասախոսներին օտար լեզվի ինտենսիվ դասընթացներում,
- նպաստել բուհի աշխատողների և սովորողների շրջանում շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ խթանելով շարժունությունը,
- զարգացնել գործընկերային կապերն արտասահմանյան բուհերի հետ, շարունակել գործընկեր համալսարանների հետ արդյունավետ համագործակցությունը,
- խթանել համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տարածումը, ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս,
- կանոնակարգել, կազմակերպել և գնահատել Հյուսիսային համալսարանում սովորող արտասահմանյան ուսանողների հետ գիտակրթական աշխատանքը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՄ

Հանրապետությունում վերջին տարիների ժողովրդագրական պատկերի վերլուծությունից հետևում է, որ առաջիկա տարիներին հանրապետության ուսանողական համակազմը կայուն

աճի միտում չի նախատեսում, որի շրջանակներում անհրաժեշտություն է առաջանում շարունակել համապատասխան միջոցառումները հետևյալ ուղղություններով՝

- համալսարանում կրթության հեռավար ձևի ներդրման համար իրականացնել նախապատրաստական աշխատանքներ, իրականացնել հեռավար ձևով ուսուցման փորձնական ծրագրեր,
- ընդլայնել լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունը՝ միաժամանակ այն մատչելի դարձնելով համալսարանի ուսանողների և շրջանավարտների համար,
- շարունակել համալսարանի և հանրապետության հանրակրթական նախնական արհեստագործական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև փոխգործակցությունը,
- ակտիվացնել համալսարանի մասին տեղեկատվության տարածման աշխատանքները,
- իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր,
- հայերեն լեզվի նախապատրաստական դասընթացների կազմակերպմամբ քայլեր ձեռնարկել օտարերկրացիների համար համալսարանում հայերեն լեզվով կրթություն ստանալու համար:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2016-2020թթ. նախատեսվում է՝

- ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ելքային արդյունքների՝ կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշներն ու գործընթացները,
- ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի անհրաժեշտ մասնագիտական որակների (կարողությունների) գնահատման և վարկանիշային համակարգ,
- կրթական գործընթացների կազմակերպմանն ու իրականացմանը երիտասարդ դասախոսների ներգրավում,
- մշակել վարչական աշխատողների և պրոֆեսորադասախոսական կազմի տարբերակված հավելավճարի համակարգ,
- համալսարանի աշխատակիցների գործառույթների հստակ տարանջատման համար մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:

Ելնելով դասախոսների մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման և համալսարանի զարգացման գործընթացների փոխկապակցվածությունից՝ մասնագիտական կոմպետենցիաների այսօրինակ կատարելագործմամբ Հյուսիսային համալսարանում, ըստ առանձին ՄԿԾ-ների, կներդրվի դասախոսական անձնակազմի որակի բարձրացման համակարգ՝ կրթության կազմակերպման նորացվող պահանջների համաձայն, ինչի արդյունքում կձևավորվի անձնային, մանկավարժական, գիտահետազոտական,

կազմակերպչական, հաղորդակցական հետևյալ կոմպետենցիաներով պրոֆեսորա-դասախոսական կազմ՝

- առարկայի խոր իմացությամբ, այդ շրջանակներում գիտության վերջին նվաճումների մասին տեղեկացվածությամբ, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացությամբ,
- մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների, գործող օրենսդրական փաստաթղթերի իմացությամբ, ուսուցման գործընթացում ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսների ուսումնասիրություն և վերլուծություն անելու, սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու, անհատական և խմբային աշխատանք կազմակերպելու կարողությամբ,
- հետազոտական նախագծերում ընդգրկվելու պատրաստակամությամբ, գիտական աշխատանքներ հրատարակելու, ուսանողների հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններով,
- բանավեճեր, քննարկումներ, ինչպես նաև ուսանողների ակտիվությունը խթանելու այլ կարողություններ ունեցող, տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու, ուսումնական գործընթացում հնարավոր պրոբլեմային իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և էթիկայի նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժը գնահատելու կարողությամբ,
- օտար լեզուների իմացությամբ:

Ի թիվս վերոնշյալի, ծրագրային ժամանակահատվածում շարունակվելու են դեռևս 2011-2015թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան միջոցառումներ, ուղղված բնագավառի աշխատուժի պարբերաբար վերլուծությանը, անձնակազմի զարգացման ծրագրերի իրականացմանը, մասնագիտական վերապատրաստման, որակավորման բարձրացման համար համապատասխան դասընթացների կազմակերպմանը, աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ անձնակազմի շահագրգռման և մոտիվացիոն համակարգերի ձևավորմանը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեխնոլոգիական հագեցվածության պահանջի առումով, որպես ծրագրային միջոցառում, նախատեսվում է՝

- հիմնադրել հեռավար ուսուցման լաբորատորիաներ՝ ապահովելով համապատասխան նյութատեխնիկական սարքավորումներով,

- զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանի ենթակառուցվածքները,
- ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների ստեղծում,
- վերազինել էլեկտրոնային գրադարանի գրական բազան,
- ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը,
- ստեղծել հրատարակչական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածք:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ

Բուհի գիտական պոտենցիալը փուլ առ փուլ բարձրացնելու համար նախատեսվում է՝

- ակտիվացնել Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետրուհական մասնագիտական կրթության կենտրոնի գործունեությունը,
- Համալսարանի և յուրաքանչյուր ամբիոնի համար հստակեցնել հետազոտական ոլորտում Հյուսիսային համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները,
- ընդլայնել ասպիրանտական կրթությամբ մասնագիտությունների ցանկը և կրթական չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին,
- աջակցել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը,
- ակտիվացնել համագործակցությունը և փորձի փոխանակումը ներպետական և օտարերկրյա գիտահետազոտական հաստատությունների, ձեռնարկությունների և բուհերի հետ,
- զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները, միաժամանակ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին ներգրավելով բուհի հետազոտական նախագծերում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

2016-2020թթ. համար համալսարանն իր առաքելությանը համապատասխան շարունակելու է հասարակության առջև ստանձնած՝ որակյալ մասնագիտական կրթական գործունեությունը, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության միջավայրում:

Ծրագրային ժամանակահատվածի համար այս ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն են՝

- մշակել բուհի կողմից հասարակությանը տրամադրվող ծառայությունների մատուցման համապարփակ ծրագիր և դասակարգել ըստ ուղղությունների,

- բուհի սովորողների և շրջանավարտների համար լրացուցիչ կրթական ծրագրերի, մասնագիտական և սոցիալական ադապտացման ծրագրերի իրականացում,
- բուհի և համապատասխան բնագավառի կազմակերպությունների միջև բազմակողմանի փոխհամագործակցության ձևավորում և զարգացում,
- բուհի սովորողների և շրջանավարտների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված խորհրդատվությունների իրականացում,
- կատարված աշխատանքների արդյունավետության ստուգման նպատակով հարստացնել հետադարձ կապի մեխանիզմները,
- բուհի գործունեության վերաբերյալ պարբերաբար հրապարակային հաշվետվողականության ապահովումը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Գործողության նկարագիր	Քայլեր/Գործիքակազմ	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք	Պատասխանատու
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
1	2	3	4	5
Բարձրացնել համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ խթանելով համալսարանի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունն ու հաշվետվողականությունը	<ul style="list-style-type: none"> • համալսարանի կազմակերպական կառուցվածքի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում (նոր կառուցվածի մշակում, հաստիքացուցակի վերանայում) • ներքին իրավական ակտերի համապատասխանեցում համալսարանի նոր կանոնադրությանը 	2016-2017թթ.	Պետ. ռեզիստրի կողմից հաստատված համալսարանի նոր կանոնադրություն: Համալսարանի գիտ. խորհրդի կողմից հաստատված նոր կազմակերպական կառուցվածք: Հստակեցված հաստիքացուցակ:	Ռեկտոր: Պրոռեկտորներ: Որակի ապահովման վարչություն: Մասնակիցների ժողով:
Հստակեցնել համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները	<ul style="list-style-type: none"> • ստորաբաժանումների գործող կանոնադրությունների, կարգերի վերանայում • համալսարանի նոր կառուցվածքին համապատասխան նոր իրավական ակտերի մշակում • հաշվետվողականության ծրագրի կատարելագործում 	2017-2018թթ.	Համալսարանի կազմակերպական կառուցվածքին համապատասխան առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններ: Վերանայված հաշվետվողականության ծրագիր:	Ռեկտոր: Պրոռեկտորներ: Համալսարանի ստորաբաժանումներ:

<p>Համալսարանի կառավարման մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովման նպատակով ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ</p>	<p><i>Registrar, Mulberry</i> ինֆորմացիոն համակարգերի կիրառման արդյունավետության գնահատում</p>	<p>2017-2018թթ.</p>	<p>Բոլոր մակարդակներում սերվերային տեղեկացվածության ապահովում: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի առկայություն:</p>	<p>Ցանցային արմինիստրատոր: Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր:</p>
<p>Ձևավորել ուսման վարձերի առավել ճկուն համակարգ</p>	<ul style="list-style-type: none"> • արտաքին և ներքին շահակիցների շրջանում հարցումների անցկացում, • շուկայի մոնիտորինգի անցկացում (հանրապետությունում գործող մյուս բուհերի փորձի ուսումնասիրություն) 	<p>Յուրաքանչյուր ուս. տարվա կտրվածքով</p>	<p>Կրթական շուկայի պահանջներով առաջնորդվելով վարձավճարների համակարգի ձևավորում (գերչային մեխանիզմների կիրառմամբ):</p>	<p>Կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր Լրացուցիչ կրթության կենտրոն:</p>
<p>Նոր և պահանջված մասնագիտություններով, այդ թվում, ըստ տարբեր կրթական ծրագրերի՝ համալսարանի գործունեության ընդլայնում</p>	<ul style="list-style-type: none"> • աշխատաշուկայի ուսումնասիրություն • ներքին և արտաքին շահակիցների համապատասխան կարիքների վերհանում 	<p>2016-2017 թթ.</p>	<p>Նոր մասնագիտությունների գծով բուհի գործունեության ընդլայնման արդյունքում ուսանողական համակազմի ընդլայնում և լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում:</p>	<p>Ռեկտոր: Բուհի ամբիոններ և ֆակուլտետներ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոն:</p>

<p>Համալսարանի ուսումնական տարածքները համալսարանի կողմից չօգտագործվող ժամանակահատվածում այլ անձանց վարձակալության տրամադրելու հնարավորությունների ուսումնասիրություն</p>	<ul style="list-style-type: none"> • գովազդի կազմակերպում, • վարձակալական պայմանագրերի կնքում 	<p>Պարբերաբար</p>	<p>Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում:</p>	<p>Ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր: Արտաքին կապերի բաժին:</p>
<p>Դրամաշնորհային ծրագրերի և այլ անհատույց միջոցների ներգրավում</p>	<p>Դաշտի պարբերաբար ուսումնասիրում և ծրագրերին մասնակցելու հայտերի ներկայացում</p>			

ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1	2	3	4	5
<p>ՄՈՒՀ-ի առաքելությանը, ՈԱՇ-ին, շուկայի պահանջներին համապատասխան, մասնագիտական կրթական ծրագրերում մատնանշել ակնկալվող ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով, թե ՄԿԾ-ի ավարտին ի՞նչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը</p>	<ul style="list-style-type: none"> • արտաքին փորձագետի կարծիքի ապահովում, • ՄԿԾ-ի որակի վերաբերյալ պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածությունը ստուգող հարցաթերթ, • կատարել շուկայի ուսումնասիրություն • լավագույն փորձի ուսումնասիրություն (բենչմարքինգ) • ներքին և արտաքին շահակիցների կարծիքների վերլուծություն 	<p>2016-2020 թթ.</p>	<p>Վերանայված ՄԿԾ-ների առկայություն: Շուկայի պահանջների համապատասխան սահմանված ՄԿԾ-ների վերջնաարդյունքներ:</p>	<p>Ուսումնական տարածքների գծով պրոռեկտոր: Ուսումնական վարչություն: Բոլո-ի ամբիոններ:</p>

